ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ «ԱՐՄԵՆԻԱՅԻ» ԷՋԵՐՈՒՄ (XX դ. սկիզբ)

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ա. Հ.

19-րդ հարյուրամյակը հայ ժողովրդի համար արյունոտ ավարտ ունեցավ: 1895-1896 թթ. սուլթան Համիդի կողմից կազմակերպված համատարած ջարդերն ու կոտորածները խլեցին ավելի քան 300.000 մարդու կյանք: Դա հայության բնաջնջման քաղաքականության կենսագործման սկիզբն էր, սկզբնական փուլը, որը հետագայում անշեղորեն շարունակեցին և՛ երիտթուրքերը, և՛ քեմալականները: Ճշմարտացի դիրքորոշում են որդեգրել այն հետազոտողները, որոնք կարծում են, թե՝ «ցեղասպանություն» երևույթի բնորոշման համար ամենևին պետք չէ գերագնահատել զոհերի թվաքանակի գործոնը: Այս առումով տեղին դիտարկում է արել պատմաբան Վարուժան Պողոսյանը՝ ընդգծելով. թե՝ «Դժվարությամբ ենք ըմբռնում, սակայն, թե որքանո՞վ է արդարացի միայն XIX դարի 90-ական թվականներին պետական քաղաքականության մակարդակով, էթնիկական հողի վրա տեղի ունեցած շուրջ 300000 մարդու ոչնչացման փաստը բնորոշել իբրև կոտորած»[1]:

Այո՛, դա ոչ թե սոսկական կոտորած էր, այլ ցեղասպանության հրեշավոր քաղաքականության սկիզբը, որն ավարտվեց ողջ Արևմտյան Հայաստանի հայազրկմամբ ու կործանմամբ: Վերոնշյալ դեպքերից հետո հայությունը կանգնած էր առավել խորքային, տարողունակ հիմնահարցերի ու մարտահրավերների առջև:

Արևմտահայ հասարակական-քաղաքական անվանի գործիչ Մ. Փորթուգալյանի կողմից Ֆրանսիայի Մարսել քաղաքում հրատարակվող «Արմենիա» պարբերականում ճշմարիտ արտացոլում էին գտնում քսաներորդ դարասկզբին հայ հասարակայնությանը (արևմտահայ, արևելահայ, գաղութահայ) հուզող կարևորագույն խնդիրները, հանրային մտահոգություններն ու համազգային մարտահրավերները:

1901 թ. հոկտեմբերի 16-ին Փորթուգալյանը վերահրատարակում է 12 տարի առաջ տպագրված խմբագրականը՝ «Պէտք է քալել» խորագրով: Կից նշված էր, որ դրանում արտահայտված մտքերը արդիական են նաև՝ այժմ: Ինչպես նաև՝ «աւելորդ չհամարեցինք մեր սկզբէն ի վեր յայտնած գաղափարներ շեշտելու և մեր հակառակորդների տարածած սխալ տեղեկութիւններ հերքելու համար»[2]: Այդ առումով հստակ ընդգծվում էր. «Մենք Հայաստանի ազա-տութեան համար յեղափոխութիւնը անհրաժեշտ միջոց մը համարած ենք միշտ, որովհետև յոյս չունինք թէ թիւրքը երբէք խղճի մտօք բարենորոգումներ կը

---

[1] **Պողոսյան Վ.,** *Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ, Ե., 2005, էջ 5:*

[2] *Արմէնիա, 1901, թիվ 5:*

մտցունէ Հայաստանի մէջ: Բայց յեղափոխութիւնը պատրաստելի գործ մը համարած ենք»[3] (ընդգծումը մերն է - Կ.Ա.): Նույն թվականի հոկտեմբերի 30-ին թերթում արտատպվում է 15 տարի առաջ լույս տեսած «Յեղափոխական գործը» վերնագրով հոդվածը՝ ընթերցողներին «... յեղափոխական գործի մասին սկզբէն ի վեր Արմէնիաի ունեցած ուղղութիւնը ցոյց տալու համար»[4]:

Թերթի էջերում մշտապես հրապարակվում են բանավիճային հոդվածներ և դիտարկումներ, որոնցում խորությամբ լուսաբանվում են հայ-հասարակական-քաղաքական մտքին հուզող արդիական հիմնահարցերը: Հատկապես մեծ կարևորություն ունեցող քննարկումների նյութ էր այն հարցադրումը, թե ով և ովքեր պիտի զբաղվեն Հայկական հարցով, Հայաստանի ազատագրության խնդիրներով: Հակիրճ ու պատկերավոր այսպես է ձևակերպվում իրողությունը. «Շատեր են մեր մէջ Հայկական խնդրով զբաղողներ. բայց քիչեր չասելու համար ոչ ոք՝ Հայաստանով կը զբաղին»[5]: Երկրից դուրս կատարվող աշխատանքների վերաբերյալ այն կարծիքն է հնչում, թե «արտասահմանի այդ գործունէութիւններ ո՛ր աստիճանի օգտակար կրնան դառնալ Հայաստանի համար, քիչ մը տարակուսելի է»[6]: Տարակուսելի է, քանի որ ազատագրվելու նպա-տակով հեղափոխական ճանապարհը մտնող ժողովրդի համար «իր բնիկ երկրին և հողին մէջ աճելու, զօրանալու և գործելու անհրաժեշտ և ամենաէական ոյժը հարկավոր է»[7]: Առանց վերոնշյալ հարազատ ուժի, որը ծնվում և հասունանում է ժողովրդի մեջ, և որը և որը «զինք պիտի ոգևորէր և առաջ մղէր, դրսի ոգևորութիւններ ոչ միայն օգտակար չեն կրնար լինել, այլ գուցէ նոյն իսկ վնասակար»[8]: Դրսում, ազատ երկրներում հայկական խնդրով խոսել, գործել, աղմուկ բարձրացնելը համեմատաբար դյուրին է, սակայն օգտակար կարող է լինել, եթե «իրեն յենակետ նոյն իսկ երկրին մէջ քիչ շատ կարևոր ոյժ մը գոյութիւն ունենար, բայց երբ այդ ոյժ կը պակասի, երբ հոն Հայաստանի մէջ ժողովուրդ անտանելի վիճակի մը մէջ, կոտորածներից, սովից, լքումներից, յուսախաբութիւններից և շարունակող հալածանքներից ուժասպառ, գրէթէ յուսահատել է, դրսի ոգեւորութիւններ միմիայն թրքութիւնը գրգռել ծառայելով, միանգամայն իսկական յեղափոխական տեսակէտից գրէթէ ոչինչ պիտի առաջացնեն»[9]:

Թերթի դիտարկումներով, XIX դարավերջի կոտորածներից առաջ հեղափոխական գործի նախապատրաստության առումով բոլորովին այլ պատկեր էր ներկայացնում արևմտահայկական իրականությունը: Գործիչների բավական մեծաթիվ խումբ էր մուտք գործել երկիր, որոնք

---

[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, թիվ 3:
[5] Նույն տեղում, թիվ 34:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում:
[8] Նույն տեղում:
[9] Նույն տեղում:

ժողովրդի հետ հարատև շփումներով կարողացել էին ազատագրական շարժման գաղափարներ սերմանել և գործը առաջ տանել:

Սակայն կոտորածներից հետո գործունեության ասպարեզը Հայաստանից «հեռուներ տեղափոխուած է և դեռ մանաւանդ ատոր հաւատացողներ կան ու կը շատանան, որ Եւրոպայի հանրային կարծիքին պատրաստութեամբ, գրգռութեամբ և նոյն իսկ կառավարութիւնների պղատոնական համակրութիւնը շարժելով, շատ մեծ գործ մը և բարիք մը արտադրած կը լինին հայ գործին ի նպաստ»[10]:

Թերթը գրում էր, որ ներկա ժամանակ Հայաստանի մեջ հեղա-փոխական կոչվելու իսկական աշխատանքը դադարել է իսպառ, քանի որ հասարակության մեծամասնությունը ծայրաստիճան հուսահատվելուց հետո հեղափոխություն երևույթին նայում է որպես մի չարիքի: Իսկ երիտասարդության մի զգալի մաս, ծանր հանգամանքներով թելադրված, ստիպված է հեռանալ: Երիտա-սարդների՝ «այսպիսի ժամանակի մէջ իրենց Հայաստան լքանելը դաւաճանութեան հաւասար գործ մը համարելի է»[11]: Ասենք, որ դեռևս 1900 թ. նոյեմբերի 28-ին «Արմենիան» վերոնշյալ հասարա-կական տրամադրություններին արձագանքում է «Ամո՛թ յուսա-հատողներին» հիմնարար հրապարակումով, որը հորդորում է, թե «պէտք է և եկել է ժամանակ գաղափարական միութեան. միանանք, ոգևորի՛նք սրբազան գաղափարներով և ոյժ տանք այդ գաղափարի յաղթանակին»[12]: Այնուհետև ասվում է, որ հեղափոխական գործի ասպարեզը պետք է մաքրել դիմակավորներից. «Յոյս տանք յուսահատ հայաստանցիին, ազատենք հայրենիքը ազգակեր-հրէշներից. ահա՛ ասպարէզ, ահա՛ սուրբ գործ: Եւ կը գայ մի գեղեցիկ օր և պիտի տեսնենք, որ էլ յուսահատելու ոչինչ չունենք»[13]: «Քննադատութիւնը կը սպաննէ» վերնագրով հոդվածում հարց էր բարձրացվում, որ հայ իրականության մեջ քննադատությունը սխալ է հասկացվում, և որ ամբոխից իրենց բարձր դասող մի շարք անձինք խրտնում են ցանկացած քննադատական խոսքից: Այդպիսիների համար, «օրինակ, յեղափոխութեան վարիչներ և անոնց գործեր քննադատելը, սրբապղծութիւն մ(է»[14]: Նման այրերին պետք է հարցնելու լինենք, թե հեղափոխական յուրաքանչյուր գործունեություն հալած յուղի պես մաքուր և անարատ լինելուն կը հավատա՞ն, - շեշտում է թերթի հոդվածագիրը (Մէն-Մէ): Նորից հարց է առաջանում՝ «Ի՞նչ կը հասկանան այդպիսիներ յեղափոխութիւն ասելով. Մեզ համար յեղափոխութի՞ւնն է նուիրական բանը, թէ չէ մեր ժողովուրդն ու հայրենիք, որի փրկութեան լոկ գլխավոր միջոցներից մին է յեղափոխութիւնը»[15]: Հեղինակն ի ցույց հեղափոխության կազմակերպիչների,

---

[10] Նույն տեղում:
[11] Նույն տեղում:
[12] Նույն տեղում, 1900, թիվ 28:
[13] Նույն տեղում:
[14] Նույն տեղում, 1901, թիվ 15:
[15] Նույն տեղում:

նորից ընդգծում է, որ հիմարություն կլինի միշտ միևնույն մեթոդները կրկնել, և հարկավոր է առավել շրջահայաց, հեռատես և անդրդվելի գործունեություն ծավալել: Կարևորվում է այն հանգամանքը, որ հայկական խնդիրը չպետք է դառնա օտար քաղաքականություններին ծառայող գործոն: 1901 թ. մայիսի 29-ին հրատարակած՝ «Ի՞նչ կընենք և ինչ կրնանք ընել» հոդվածում Մ. Փորթուգալյանը խիստ ոճով գրում է, որ բառերի վրա խաղալու եղած ենք, քանզի «յեղափոխութիւն, միութիւն, ընկերվարականութիւն, դիվանագիտություն և այլն բառեր չափազանց կրկնեցինք ու յեղյեղեցինք, թէն ճշմարիտ կրսէմ որ ատոնց նշանակութիւնն անգամ դեռ չենք սորված»[16]:

Եվ եթե հայ հեղափոխականները բառերի վրա խաղալով պարծանք և պարտք կատարած լինելու գոհունակությունը կզգան և մինչ մենք մեզ կխաբենք, ապա մեր ոխերիմ թշնամին գործում է և հայությունը «այլևայլ միջոցներով հետզհետէ Հայաստանէն ջնջելու վրայ է»[17]:

Փորթուգալյանը ցավով նշում է, որ հայ ազգային-ազատագրա-կան ուժերը ի մի բերելու և ներքին միասնական ուժ գոյացնելու ուղղությամբ կատարված փորձերը մինչև օրս ցանկալի արդյունքի չեն հանգեցրել[18]: Եվ հարց է տալիս, թե ինչպե՞ս կարող էր այն գոյանալ, երբ «անոր ծնունդ տուող տարրերը, գաղափարները չկան դեռ ժողովուրդին մէջ կամ պէտք եղածին չափ հասունացած չեն դեռ»: Ուրեմն, ըստ խմբագրի, պետք է աշխատել հասարակ ժողովրդի շրջանում այդ գաղափարներն ու մտայնությունները արթնացնելու, հասունացնելու ուղղությամբ և արդեն ձևավորված գաղափարակիցներին իրար մոտեցնելով, միացնելով ու զորացնելով: Վերոնշյալ հոդվածից որոշ ժամանակ անց՝ 1902 թ. նոյեմբերի 5-ին «Ներկայ վիճակ» հրապարակման մեջ Փորթուգալյանը գրում է, որ իր կոչումն ըմբռնող հայ խմբագրի պարտականությունն է առաջնորդել հանրային կարծիքը և ոչ թե զանազան կողմեր փչող քամիների առաջն ընկած՝ «անոնց հոսանքէն մղուիլ այս ու այն կողմ, կողմնացոյցը կորուսած նաւի մը պես»[19]:

Ահա այս ըմբռնումով է, որ «Արմէնիա» պարբերականը տուրք չի տալու այն հանգամանքին, թե «այսօր ինչ տեսակ փող հնչելէ կախորժի ամբոխը որ անոր համեմատ նուագէ ինք ալ... ժողովրդականութեան դափնիներ շահելու համար»[20]:

«Ինչո՞ւ չենք հասկանալ» վերնագրով ուշագրավ հրապարակման մեջ խորաքնին դիտարկումներ են կատարվում ստեղծված իրողությունների վերլուծության ու իմաստավորման ուղղությամբ: Նշվում է, որ XX դարասկզբին հայության առջև ծառացած մարտահրավերները շատ ծանր են, որոնք վեր են հանում այն դաժան ճշմարտությունը, որ թուրքական բիրտ ու դաժան քաղաքականությունը արևմտահայության հանդեպ շարունակվում է

---

[16] *Նույն տեղում, 1901, թիվ 39:*
[17] *Նույն տեղում:*
[18] *Նույն տեղում:*
[19] *Նույն տեղում, 1902, թիվ 1:*
[20] *Նույն տեղում:*

նույն վայրագ մեթոդներով: Ուրեմն, չպետք է սին հույսեր ու պատրանքներ ունենալ, թե այդ քաղաքականությունը կարող է փոխվել, քանզի «հայութեան և թրքութեան միջև անջրպետն արդարև այնքան լայնացած է և խորունկ, որ ատոր այլապէս դարմանումը երազ մը պիտի լինէր»[21]: Ահա այս է իրավիճակը, և սկսված կռիվը պետք է շարունակել. «անդադար և արիւնոտ կռիւ. հոն՝ այդ կատաղի, անվեհեր, անյուսահատ և մինչև նպատակը տևական կռուին մէջ միայն մեր ազգութիւն իր ճակատագիրը պիտի կրնայ փրկել»[22]: Սույն միտքը, ըստ հրապարակագրի, նույնպես ոչ դարագլխյան է և ոչ էլ դարավերջյան, այլ բոլոր ստրկացված ազգերի ազատագրության հավիտենական հին երգն է: Դա այդպես է, անկասկած, քանի որ մինչև այսօր կոշտ ու բռնավոր ուժի դեմ «գաղափարն իր յաջողութիւններ անդադար մարտնչումի, անձնուի-րութեան և զոհողութեան միայն պարտական է»[23]:

Թերթը հորդորում է, որ մեր ժողովրդի «հաւատարմութիւն ու համբերութիւն չէ որ այլևս պիտի կրնայ զինք փրկել, իր կորուստ իր թշնամիներից անդառնալի վճռուած է»[24]: Սա, անշուշտ, իրատեսական դիտարկում էր, քանի որ արևմտահայության բնաջնջման ծրագիրը, որը հղացվեց Բեռլինի կոնգրեսից անմիջապես հետո, Օսմանյան Թուրքիայի իշխանությունների կողմից բարձրացվեց պետական քաղաքականության մակարդակի: Այդ քաղաքականության արյունարբու դրսևորումը 1894-1896 թթ. հայոց համա-տարած կոտրածներն էին, որոնց զոհ գնաց շուրջ կես միլիոն մարդ: Եվ XX դարասկզբի հայ իրականության մեջ արդեն կային լուրջ գործիչներ ու անհատներ, որոնք պարզ գիտակցում էին, որ հայության բնաջնջման աբդուլհամիդյան քաղաքականությունը շարունակվելու է նոր թափով:

Սույն դաժան իրողությունների հաշվառումով է, որ պարբերականը հաստատում է՝ «Այո՛, այս՛ է, կը կրկնենք, մեր ժողովուրդին վիճակն ու պարտք, այն օրից ի վեր, երբ իր առաջ ցցուել է այլևս լինել-չլինելու անխուսափելի հարցը»[25]:

«Արմէնիա»-ի խմբագրակազմը հստակ գիտակցում էր, որ արևմտահայության առջև արդեն դրված էր լինել թե չլինելու ահեղ հարցականը, ուստի տեղին ու արդարացված էր այն նկատառումը, թե «Սուլթանից չի կարելի խնդրուել որ նա հաճի իր կոտորածն ու հալածանքներ յետաձգել մինչև որ մենք կարողանանք քիչ մը ոյժ պատրաստել»[26]:

Հեգնական ոճով արված սույն դիտարկումը XX դ. սկզբի հայ-թուրքական հարաբերությունների իրական վիճակը ներկայացնող ճշմարտություն է: Խորը վերլուծություններով ցույց է տրվում հայ-թուրքական արյունալի ու անհաշտելի հակամարտության ծագման ու սկզբնավորման հիմքն ու

---

[21] Նույն տեղում, 1901, թիվ 25:
[22] Նույն տեղում:
[23] Նույն տեղում:
[24] Նույն տեղում:
[25] Նույն տեղում:
[26] Նույն տեղում:

ընթացքը, այն, որ վերոնշյալ հակամարտությունը անդառնալի կերպարանք առավ սուլթան Համիդի գահակալության օրոք: 1877-1878 թ. ռուս-թուրքական պատերազմը, հայ ժողովրդի խանդավառությունը, արևմտահայերի կողմից «Լորիս-Մելիքովի և Տէր-Ղուկասովի զօրքերին եղած ոգևորուած ընդունելութիւնը՝ թուրքերը սաստիկ գրգռելով մէկտեղ, նոր ապացոյց մը տուաւ այն թիւրքերի որոնք կը փաստաբանէին թէ հայերը տևական վտանգ մ(են իրենց տիրապետութեան համար Առաջաւոր Ասիայի մէջ»[27]:

Եվ Հայկական հարցի հայտնվելը Բեռլինի վեհաժողովում, խաբեպատիր 61-րդ հոդվածը, որը Հայաստանի համար բարենորոգումներ էր խոստանում եվրոպական մեծ պետությունների հսկողության ու երաշխավորության ներքո, «օսմանեան կառավարութիւնը հաստատեցին այն համոզման մէջ թէ ամեն կերպով պէտք է աշխատիլ մէջտէղէն վերցունելու այսպիսի քրիստոնեայ տարր մը որ կերևէր թէ անկարելի է իր ուզած շրջել»[28]: Զարմանալի խորաթափանցությամբ է բացահայտվում մեթոդների այն զինանոցը, որով Համիդը անպայման փորձելու էր ազատվել հայերից ու Հայկական հարցից: Դա նախ և առաջ «համիդիե» կոչված հեծելազորի գնդերն են, «որոնք հաստատուեցան ամբողջ քիւրտ ժողովուրդը զինելու և, ամէն վայրկեան պատրաստ կեցած, հայերին վրայ յարձակել տալու համար, կատարելագործումն են այն գաղափարի որ Պէրլինի վեհաժողովէն անմիջապէս յետոյ երևան եկաւ, 61-րդ յօդուածի գործադրութիւնն արգիլելու նպատակով քրդական միութիւն մը կազմելու նախնական խորհուրդների ժամանակ.:

Այսպիսով, «Արմենիա» պարբերականի էջերում XX դ. սկզբին տեղ գտան ազգային կարևորագույն այն հիմնախնդիրներն ու մարտահրավերները, որոնք առնչվում ու աղերսվում էին հայ հասարակայնության ճնշող մեծամասնության և աշխարհասփյուռ հայ ժողովրդի լայն զանգվածների ճակատագրին:

---

[27] *Նույն տեղում, 1901, թիվ 23:*

[28] *Նույն տեղում:*

ОСВЕЩЕНИЕ НАЦИОНАЛЬНЫХ ВОПРОСОВ НА СТРАНИЦАХ “АРМЕНИИ” (начало XX века)

КАРАПЕТЯН А. О.

Резюме

На страницах издававшейся в Марселе еженедельной газеты “Армения”, главным редактором которой был М. Португалян, публиковались материалы, касающиеся важнейших национальных проблем, в частности, геноцида армян и политики султана Абдул Гамида.

Газета предупреждала о том, что султан Гамид никогда не осуществит реформ, предусмотренных 61-й статьей Берлинского трактата, и призывала армян к национальному единству.

COVERING NATIONAL ISSUES IN "ARMENIA" (the beginning of XX century)

A. KARAPETYAN

Abstract

Armenia a weekly newspaper, published in Marseilles and edited by M. Portugalyan, made coverage of important national issues, in particular, the Armenian Genocide and Sultan Abdul Hamid’s policy.

The newspaper warned that Sultan Hamid would never make the reforms envisaged by Article 61 of Berlin Treaty, and encouraged the Armenians to be unified.